

### բանասիրական

#### ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Աս Աստղն Հիսիսայ :

Լուրջ եւ տրխուր գիշերայնոյն  
 Օռւարթաճաճանչ վառին հրրատք .  
 Ի մութ գընտին՝ ցրդարձ նորուն  
 Ղեմին փառօք լուսոյ ջոկատք .  
 Լւրաքանչիւր գայ յուշիկ  
 Յաստղապահակն իւր լուիկ ,  
 Պատի զերկնիւք շուրջակայ  
 Եւ անդրէն յետըս դառնայ :

Ունի եւ տիւ հանգոյն նոցին  
 Լստեղս ի զարդ իշխանութեան ,  
 Արք ի կապոյտ դաշտս հեռագին  
 Լնտեպք՝ ընդ հուր շաւեղն երթան .  
 Յոյլ եւ պայծառ յուղարկուք՝  
 Մինչ երիկուն աճէ շուք  
 Պատմեն քանի գունդ շողուն  
 Նազեն ծածկին զոյգք նորուն :

Իսկ դու զնոց՝ աստղըդ բեւեռին  
 Ղիտես ծագումն եւ մուտս ի մայր .  
 Դու միայնակ յերկնիդ ցըրտին  
 Լնչարժ պահնակ կաս ի հին վայր .  
 Լնդ կաքաւիչ նոցայն պար  
 Դու չըչարժես գարշապար ,  
 Եւ ոչ մըխես ծոց կուսան  
 Յարեւմըտիցն ովկիան :

Ի տալ տուրնջեան ծայր ծիրանի  
 Լնտուստ հայիս հեզ՝ յօդ կարմիր ,  
 Եւ երեկոյ մինչ զօր տանի  
 Ղրտանէ զքեզ ի նոյն քոյ դիր .  
 Լնդ՝ ելք ալեայ միջօրեայն ,  
 Լնդ՝ դիտէ զքեզ եւ ժամն այն  
 Ար զհիւսիսին կոչէ զբոց  
 Յանցել զերկնից կապոյտ ծոց :

Լզգործ իւրեանց լոյս եւ խաւար  
 Լնդ ակնարկեալ քով կատարեն .  
 Նըխեն քաղաքք յօդս աստղավար ,  
 Սըրուրք մարտից զարեւ սքօղեն :

Գիշերային փութորիկ  
 Գուայ՝ նդ բըլուրս պարաւիկ ,  
 Հողմ ցերեկի ալէկոծ  
 Խառնէ զկոհակս ընդ ամպոց :

Հէգ նաւուղիդ կարկնակորոյս  
 Յանայլայլակ շող քոյ դիմաց  
 Կառուցեալ զաչս յաներկբայ լոյս  
 Յափունս ծանօթ ուղղէ զընթաց .  
 Եւ որք յահեղն ամային  
 Լզգիշերայն աստանդին ,  
 Ի տես լուսոյդ ըսփոփեալ  
 Օմուլարն իւրեանց ուղղեն քայլ :

Վասն այնորիկ եւ քերդողք հին ,  
 Լզգօնք , մոնազք խոր անտառաց ,  
 Ի ճառագայթ քո դիտէին  
 Լզտիպ չըքնաղ բարւոյն անանց ,  
 Լն՝ յոյր ճաճանչ անմըթար  
 Յաւիտենիցն ի լամբար՝  
 Եւ ամանակին ուղեւոր  
 Օընթացսն ուղղէ զգուշաւոր :

ՊՐԱՅԻՆԴ

#### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Լուրովիկու ԺՁիւն վարքն ու մահը :  
( Տես երես 268 ) :

Երկրորդ օրը , ամսուն 12<sup>ին</sup> , թագաւորը հարցուց առջի տեսած պահապանին՝ թէ արդեօք հրաման մը եկա՞ւ իր ընտանիքը տեսնալու խնդրոյն վրայօք . անիկայ պատասխանեց՝ որ « Ղեռ հրամանի կը սպասենք » : Լն ատեն ազաւեց թագաւորը նոյն պահապանին , որ իշխանու հեաց եւ թագաժառանգին ինչ պէս ըլլալն իմանայ ու վերջը իրեն իմացընէ , եւ անոնց ալ ըսէ որ նաև ինքը աղէկ է : Պահապանը երբոր դարձաւ , ապահովցուց զթագաւորը որ ամէն ալ ողջ առողջ էին : Թագաւորը հրամայեց ինձի որ իր որդւոյն անկողինը վերը թագուհւոյն խուցը տանիմ . վասն զի նոյն գիշերը թագուհին իր խոտէ անկողինը թագաժառանգին տուեր էր որ պառկի . բայց աղաւթի ես թագաւորին որ գոնէ ժողովքին որոշմանը սպասէ . ան ատեն

ըսաւ թագաւորը . “ Ը իտակն ըսեմ՝ ոչ արդարութիւն և ոչ մարդավարութիւն կը յուսամ ես անոնցմէ , սակայն տեսնենք թէ ինչ պիտի ըլլայ ” :

Նոյն օրը Վաշնակից ժողովքէն խորհուած պատգամաւորներ եկան , որոնք չորս հոգի էին , (Թիւրիոյ , Վաճագասերէզ , Տիւպուա-Վրանսէ , ու Տիւբոնտը-Պիկոն . ասոնք թագաւորին հրովարտակ մը բերին , որով կը շնորհէր իրեն ժողովքը՝ որ փաստաբան մը ընտրէ : (Թագաւորը Պ . Վարժէն անուանեց . “ Եւ թէ որ անիկայ զբաղած ըլլայ նէ , ըսաւ , Պ . Վրոնշէն տեղը լեցնէ . իսկ եթէ ժողովքը թոյլ կու տայ , երկուքն ալ մէկտեղ ըլլան ” : Պատգամաւորները գրել տուին թագաւորին իր խնդիրքը , ու իրենք ալ ստորագրեցին : (Թագաւորը վրայ բերաւ անատեն՝ որ թղթի , գրչի ու թանաքի կարօտութիւն ունէր . վերջը Պ . Վրոնշէն բնակութե տեղը սորվեցուց , իսկ Պ . Վարժէինը չեմ գիտեր , ըսաւ :

Երկրորդ առտուն նորէն Տաճարն եկան նոյն պատգամաւորները , և ըսին թագաւորին՝ որ Պ . Վարժէ հրաժարելով չէ ուզած իրեն փաստաբան ըլլալ , և թէ մարդ խրկեր են Պ . Վրոնշէն կանչելու համար , որն որ անվրէպ նոյն օրը պիտի գար : Վերջէն քանի մը հոգւոյ առ Վաշնակից ժողովքը գրած նամակները կարդացին իրեն . ասոնց մէջը կար նաև Պ . Լամուանեօն տը Մալէրպին մէկ թուղթը , որ բաց ՚ի ուրիշ պաշտօնէ՝ արքունական տան հազարապետն ալ եղած էր . նամակը աս կերպով գրած էր :

Բարիզ , 11 Դեկտ . 1792 .

Քաղաքացի գահագրութի .

Ձեմ գիտեր թէ արդեօք Վաշնակից ժողովքը կու տայ Լուդովիկոս ԺԶին փաստաբան մը՝ զինքը պաշտպանելու համար , և թէ արդեօք աս բանիս ընտրութիւնը իրեն կը թողու՝ թէ չէ : Ասոր համար կը փափաքիմ որ Լուդովիկոս ԺԶ գիտնայ իմ յօժարութիւնս , որ եթէ ինքը զիս առաջարկելու ըլլայ , ես ամենապատրաստ եմ իրեն ծա-

ռայելու : Ձեմ ուզեր և ոչ իսկ կը փափաքիմ՝ որ աս իմ խնդիրքս Վաշնակից ժողովքին առաջարկուի , վասն զի արժանի չեմ որ ժողովքը ինծի պէս մարդու մը վրայ մտածէ և որոշմունք մը ընէ . բայց որովհետեւ երկու անգամ անգամ ընտրուած եմ ան մարդուն Խորհրդի ատենին , որ իմ տէրս եղած է , և անանկ ժամանակ մը՝ որ ամէն մարդ նոյն պաշտօնին կը փափաքէր , անոր համար հիմա ինծի պարտք կը համարիմ աս միջոցին ծառայելու իրեն , մանաւանդ որ շատերը վտանգաւոր սեպելով չեն ուզեր յանձն առնել : Թէ որ ուրիշ յարմար կերպ մը կարենայի գտնալ իմ աս փափաքս իրեն իմացընելու , չէի համարձակեր աս բանս հրամանրիդ գրել . բայց մտածեցի թէ հրամանրէդ յարմարը չկայ՝ որ կարենայ իմացընել իրեն իմ աս յօժարութիւնս , հրամանրիդ ունեցած պաշտօնին պատճառաւ :

Մնամ յարգոչքեաւք

ԼԱՄՈՒԱՆԵՕՆ ՏԸ ՄԱԼԷՐՊ

Ըն ատեն թագաւորը պատգամաւորներուն ասանկ ըսաւ . “ Իմացայ աս անձանց սէրը , որոնք զիս պաշտպանելու կը փափաքին , և կ'աղաչեմ որ իրենց իմ կողմանէս շնորհակալ ըլլաք : Պ . Մալէրպը ինծի փաստաբան կ'ընտրեմ , և թէ որ Պ . Վրոնշէ չուզենայ օգնական ըլլալ , ես Պ . Մալէրպին հետ խօսելով ուրիշ մը կ'ընտրեմ ” :

Վեկտեմբերի 14ին Պ . Վրոնշէ թագաւորին հետ տեսնուեցաւ հրովարտակի մը զօրութեամբ . նոյն օրը նաև Պ . Մալէրպն ալ ներկայացաւ : (Թագաւորը աս պատկառելի ծերուն ընդ առաջ դնաց , ու գորովալիւր կերպով մը պագտուեցան իրարու հետ : (Թագաւորին այս հին պաշտօնեայն երբոր իր տէրը տեսաւ , աչքերը արցունքով լեցուած սկսաւ լալ . կարծես թէ խեղճին միտքը եկան անոր թագաւորութեան առջի տարիները , և կամ թէ կը մտածէր որ ինչպէս ասանկ առաքինի անձը աշխարհքիս վշտաց խաղալիկ եղած էր : Արովհետեւ թագաւորին հրաման կար ծածուկ իր փաստաբաններուն հետ խօսելու , ես խուցին դուռը գոցեցի , որպէս զի ազատութեամբ մէկմէկու հետ խօսակցին . բայց պահապաններէն մէ-

կը տեսաւ աս բանս , ու հրամայեց որ բանամ , ըսելով որ մէյ մ'ալ ասանկ բան չընեմ : Սակայն թագաւորը արդէն պզտի աշտարակը քաշուած էր , որ իրեն ներքնասենեկի տեղ կը ծառայէր :

Թագաւորը ու Պ . Տը Սալէրայ աս առջի անգամուան մէկմէկու հետ տեսնուելու ատեննին բարձր ձայնով կը խօսէին . անանկով դուրսը եղող պահապանները ականջ դնելով հասկըցան անոնց խօսածը : Արբ Պ . Սալէրայ գնաց թագաւորին քովէն , իմացուցի ես թագաւորին պահապաններուն ըրածը , և թէ ինչպէս արգիլէր էին զիս դուռը գացելէն . և աղաչեցի՝ որ երբոր ուրիշ անգամ փաստաբանը քովը գտնուի , դուռը ինքիրմէ գոցէ , զորն որ կատարեց :

Վեկտեմբերի 13<sup>ն</sup> թագաւորը իր ընտանեացը նկատմամբ ըրած խնդիրքին պատասխան մը ընդունեցաւ , որուն մէջ գրուած էր՝ թէ « Թագաւորին ու Աղիսաբէթ խաթունը թագաւորին հետ ամենևին հաղորդակցութիւն չունենան , ինչուան որ դատաստանը չմըննայ . և թէ որ կը փափաքի թագաւորը իր որդիքները տեսնալ , կրնան քովը գալ անոնք միայն . բայց ան պայմանաւ՝ թէ ինչուան որ վերջին հարցափորձը չմըննայ , իրենց մօրը ու Աղիսաբէթ խաթունին քովը չերթան » : Արբ թագաւորին հետ ծածուկ խօսելու առիթունեցայ , հարցուցի թէ ինչ կը մտածէր հրովարտակին վրայօք . որուն պատասխանեց խեղճը ցաւած սրտով . « Այլ թէ ինչ անգութ բան վճռեր են , անանկ որ չեմ կրնար բան մը որոշել . աղջիկը քովս առնել անկարելի է . նոյն պէս թէ որ մանչը առնեմ , թագաւորին շատ պիտի վշտանայ . ուստի հարկ է որ այս զոհս ալ ընեմ » : Ա երջը հրամայեց ինծի՝ որ թագաւորին անկողինը փոխադրեմ , զորն որ մէկէն ըրի : Ար լուացքն ու զգեստները քովս պահեցի , ու Աղիսաբէթ խաթունին հետ դրած խօսքերնուս համեմատ՝ երկու օր մէյ մը փոխուելու համար հարկաւոր եղած զգեստները կը խրկէի իրեն :

Մնուն 16<sup>ն</sup> , կերակուրէն վերջը չորս

սին ատենները ուրիշ չորս նոր պատգամաւորներ ալ եկան , որոնք Վսանեւ միոց ըսուած յանձնարարական ժողովքին անդամներէն էին , և եկեր էին քննելու թագաւորին դատաստանը : Ասոնց անուններն էին Ալաղէ , Վոշոն , Արանբէ , ու Տիւբրա . և հետերնին քարտուղար մը , գննապան մը ու Վաշնակից ժողովքին պահապաններէն մէկը կար . իրենց հետ բերած էին թագաւորին դէմ եղած ամբաստանական գրուածքը , և անոնց վերաբերեալ խել մը թղթեր , զորոնք ըստ մեծի մասին Վիւլերուիէն գտած էին երկրթէ դարանի մը մէջէն :

Չորսէն սկսեալ ինչուան կէս գիշեր գնաց կարդացմունքը . բոլոր գրուածքները 107 կտոր էին . զանոնք ամէնն ալ թագաւորը կարդաց ու ստորագրեց . նոյն բանն ըրաւ ան գրուածքներուն երկրորդ օրինակներուն ալ : Թագաւորը սեղանատախտակի մը առջև նստած էր . քովը Պ . Վրոնչէ կար , իսկ դիմացն ալ պատգամաւորները : Մէն անգամուն գրուածք մը կարդալնէն վերջը , Ալաղէ կը հարցընէր թագաւորին . « Եանսթութիւն մը ունիս աս կամ ան բանին վրայ » . իսկ ինքը՝ այո կամ չէ կը պատասխանէր առանց երկայն բացատրութեան . ուրիշ պատգամաւոր մը կը հրամայէր որ ստորագրէ . երրորդ պատգամաւոր մըն ալ կը հրամայէր որ ստորագրէ նոյն թղթերուն գաղափարները . իսկ չորրորդը գրուածքները կը ժողովէր ու կարգի կը դնէր , և կը նշանէր ըստ թուոյն . և քարտուղարն ալ կը նշանէր թագաւորին յանձնուած աս թղթերուն թիւերը :

Թագաւորը ընթերցմունքը ընդհատելով՝ հարցուց պատգամաւորներուն թէ կ'ուզէն ընթրիք ընել . անոնք ալ այո ըսին : Ան ատեն թագաւորը հառաքանի մը տեսակ պտուղ հրամայուց իրենց ուտելու կերակրոյ սրահին մէջ : Պ . Վրոնչէ բան մը չուզեց ուտել , և թագաւորին հետ իրեն խուցը մնաց :

Մերսըրոյ անունով մարդ մը , որ նոյն ատեն քարակոփութիւն կ'ընէր , և քիչ

մը առաջ Ռարիզի հասարակութեան  
 գահագլուխ եղած էր, ու Յեղափոխու-  
 թենէն առաջ ալ Վերսայլի մէջ աթոռ  
 քայցընող էր, նոյն օրը առջի անգամուն  
 ինքն ալ Տաճարին մէջ պահպանու-  
 թիւն կ'ընէր: Ըստիկայ իր աշխատութե-  
 աղտոտ զգեստը հագած, գլուխը ան-  
 պիտան գլխարկ մը դրած, կաշիէ ղեն-  
 ջակ մը մէջքը կապած, եկեր թագա-  
 ւորին քով թեւաւոր աթոռի մը վրայ  
 ոտքերը երկնցուցած նստեր էր, ուր ընդ  
 հակառակն թագաւորը հասարակ ա-  
 թոռի մը վրայ նստած էր. աս մարդս  
 ամենուն հետ տմարդութեամբ գլխար-  
 կը գլուխը՝ եզակի դէմքով այսինքն դու-  
 ըսելով կը խօսէր: Պատգամաւորները  
 աս բանիս վրայ զարմացան, և ուտելու  
 ատեննին անոնցմէ մէկը խել մը բաներ  
 հարցուց ինձի ան մարդուն վրայօք, և  
 թէ ուրիշ պահպաններն ալ աս կեր-  
 պով կը վարուէին արդեօք թագաւորին  
 հետ: Եւ հարցմունքներուն պատաս-  
 խան կու տայի. բայց անդիէն պատգա-  
 մաւորներէն մէկը դադրեցուց խօսա-  
 կցութիւնը, ըսելով որ ինձի հետ խօսե-  
 լու հրաման չկար, և թէ Խորհրդարա-  
 նի խուցին մէջ ուզածը կրնար իմանալ:  
 Պատգամաւորը վախնալով ըրածին վը-  
 րայ՝ ուրիշ բան չհարցուց ինձի: Բիչ  
 մը վերջը նորէն սկսաւ ընթերցմունքը:  
 Ըստ գրուածքներէն մէկ մասը ազ-  
 դային սահմանադրութեան վերաբե-  
 ռեալ բաներ էին, որոնց լուսանցքը  
 թագաւորին ձեռքովը գրուած բացա-  
 տրութիւններ կային՝ ոմանք թանաքով  
 և ոմանք ալ մատիտով: Թագաւորին  
 ներկայացուցին նաև քաղաքական յան-  
 ցանաց ատենին արձանագրութիւններ,  
 որոնց մէջ իր ծառաներէն շատին ամ  
 բաստանութիւնները կային իր անձին  
 դէմ: Ինձի այնպէս մը երևցաւ, որ աս  
 ապերախտութիւնս թագաւորին շատ  
 ծանր եկաւ: Ըմբաստանողները իրենց  
 զրպարտութիւնը աւելի ընդունելի ընե-  
 լու համար՝ թագաւորին ու թագու-  
 հայն Իւլերուեայ դղեկին մէջի ըրած  
 մանր մունր բաները բոլոր նշաններ էին:  
 Երբոր պատգամաւորները գացին,

թագաւորը երկու պատառ կերակուր  
 մը բերանը դնելէն վերջը՝ առանց քա-  
 շած նեղութեանը վրայ դանգատելու  
 անկողին գնաց: Միայն հարցուց ինձի  
 թէ արդեօք ընտանիքը սովորական ա-  
 տենին կերակուրնին կերած էին. և  
 երբոր ես այս զուրցեցի, «Վախցայ,  
 ըսաւ, որ չըլլայ թէ կերակուրին ուշա-  
 նալը զիրենք անհանգիստ ըրած ըլլայ»,  
 իսկ ինձի ալ նեղացաւ որ ինչուան ան  
 ատեն չէի կերած իրեն սպասելով:  
 Մէկ քանի օր վերջը նորէն Տաճարն  
 եկան նոյն չորս պատգամաւորները, ո-  
 ղոնք Ռսանեմիոց ժողովքին անդամնե-  
 րէն էին, և թագաւորին ուրիշ ճ՛՛՛ գը-  
 ղուածք ալ կարդացին. մէկալնոնց պէս  
 ասոնց տակն ալ ստորագրեց. իսկ բոլոր  
 գրուածքները, որոնցմէ իրեն ալ մէյմէկ  
 օրինակ տուին, 158 կտոր բան եղաւ:  
 Դեկտեմբերի 14<sup>էն</sup> ինչուան 26<sup>ը</sup> թա-  
 գաւորը իր փաստաբաններուն հետ կը  
 տեսնուէր, որոնք կէսօրուան հինգին  
 կու գային ու իննին կ'երթային. եր-  
 կու առջիններուն վրայ աւելցաւ նաև  
 Պ. Տրսէզն ալ: Ըմէն առաւօտ Պ.  
 Տը Մալերպը կու գար, և թագաւորին  
 կը բերէր պատգամաւորաց կարծիքն  
 ու խօսակցութիւնները իրեն դատաս-  
 տանին վրայօք, որոնք տպուած կ'ըլ-  
 լային. իրիկուան ընելու գործողութիւն-  
 ները կը պատրաստէր, և մէկ երկու  
 ժամ թագաւորին հետ կը կենար: Թա-  
 գաւորը շատ անգամ ինձի ալ կու տար  
 ան կարծիքները՝ որ կարդամ. և վերջը  
 կը հարցընէր մէյ մը՝ թէ «Ինչպէս  
 կ'երևայ քեզի սա մարդուս կարծիքը»,  
 — «Ընմ գիտեր ինչպէս բացատրեմ  
 իմ զայրոյթս, կը պատասխանէի, տէր  
 արքայ. բայց ինչպէս կրնաք առանց  
 քստմնելու կարդալ աս բաներս», —  
 «Ար դիտեմ թէ մարդուս չարութիւնը  
 ինչ աստիճանի կրնայ հասնիլ. սակայն  
 չէի կարծեր որ այսչափ ալ կարենայ ըլ-  
 լալ», ինքը առանց աս գրուածքներս  
 կարդալու չէր պառկեր, և որպէս զի  
 Պ. Մալերպն ալ վտանգի մէջ չիյնայ,  
 կը փութար զանոնք այրելու:

